«Յուքոմ» ՍՊԸ
Համախմբված ֆինանսական հաշվետվություններ
2015թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0010
Վ.Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 566 762
Ֆաքս + 374 (10) 566 762
Ինտերնետ www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Յուքոմ» ՍՊԸ
Ղեկավարությանը

Մենք իրականացրել ենք «Յուքոմ» ՍՊԸ-ի («Ընկերություն») և վերջինիս դուստր կազմակերպությունների («Խումբ») կից ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Ղեկավարության պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն կազմման և ճշմարիտ ներկայացման համար պատասխանատու է ղեկավարությունը: Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը համարում է անհրաժեշտ սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք համախմբված ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից, ներառյալ համախմբված ֆինանսական հաշվետվությունների՝ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս

աուդիտորը դիտարկում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների խելամտության, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր կարծիքի հիմք հանդիսանալու համար:

Եզրակացություն

Մեր կարծիքով համախմբված ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս գործունեության արդյունքները ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

Տիգրան Գասպարյան
Տնօրեն

Դրինուս Գևորգյան
Աուդիտի տնօրեն

«ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ»
«KPMG» ARMENIA»
02529689

KPMG Armenia CJSC

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
7 հուլիսի 2016թ.

հազ. դրամ	Ծնթգ.	2015թ.	2014թ.
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	10	29,561,618	19,496,636
Ոչ նյութական ակտիվներ և գուդվիլ	11	28,067,992	12,016,672
Տրված փոխառություններ		6,701	36,468
Կանխավճար շահութահարկի գծով		729,112	-
Կանխավճարներ		454,379	-
Հետաձգված հարկային ակտիվներ	9	653,518	-
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		28,290	5,400
Ոչ ընթացիկ ակտիվներ		**59,501,610**	**31,555,176**
Պաշարներ	12	928,255	262,165
Առևտրական դեբիտորական պարտքեր	18(գ)	4,803,893	2,105,710
Ստացվելիք ԱԱՀ		5,512,856	759,830
Կանխավճար շահութահարկի գծով		17,777	19,968
Կանխավճարներ այլ հարկերի գծով		10,648	7,604
Կանխավճարներ		1,274,275	325,192
Տրված փոխառություններ		19,061	56,260
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13	1,285,954	214,741
Ընթացիկ ակտիվներ		**13,852,719**	**3,751,470**
Ընդամենը ակտիվներ		**73,354,329**	**35,306,646**
Սեփական կապիտալ	14		
Կանոնադրական կապիտալ		16,959	15,050
Կուտակված վնաս		(4,332,883)	(1,906,109)
Լրացուցիչ կապիտալ	16	7,143,157	6,519,894
Ընդամենը սեփական կապիտալ		**2,827,233**	**4,628,835**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	16	53,919,920	18,915,673
Հետաձգված հարկային պարտավորություններ	9	653,518	1,263,934
Պահուստներ	15	1,137,959	-
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	17	-	659,266
Ոչ ընթացիկ պարտավորություններ		**55,711,397**	**20,838,873**
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	16	5,227,850	4,539,391
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	17	7,196,087	4,983,989
Հետաձգված հասույթ և ստացված կանխավճարներ		1,740,450	162,562
Վճարվելիք այլ հարկեր		651,312	128,903
Ընթացիկ հարկային պարտավորություն		-	24,093
Ընթացիկ պարտավորություններ		**14,815,669**	**9,838,938**
Ընդամենը պարտավորություններ		**70,527,096**	**30,677,811**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**73,354,329**	**35,306,646**

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 49-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

հազ. դրամ	Ծնթգ.	2015թ.	2014թ.
Հասույթ	6	20,385,787	11,946,852
Այլ եկամուտ	5(ա)	921,326	59,943
Մաշվածության և ամորտիզացիայի ծախսեր		(4,822,179)	(2,743,118)
Աշխատակազմի գծով ծախսեր		(3,672,910)	(1,724,000)
Այլ ծախսեր	7	(12,816,192)	(4,598,117)
Գործառնական գործունեության արդյունքները		**(4,168)**	**2,941,560**
Ֆինանսական եկամուտ	8	154,271	377
Ֆինանսական ծախսեր	8	(3,341,200)	(4,510,981)
Զուտ ֆինանսական ծախսեր		**(3,186,929)**	**(4,510,604)**
Վնաս նախքան շահութահարկով հարկումը		**(3,191,097)**	**(1,569,044)**
Շահութահարկի գծով հատուցում/(ծախս)	9	766,232	(312,496)
Վնաս և ընդամենը համապարփակ վնաս տարվա համար		**(2,424,865)**	**(1,881,540)**

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2016թ. հուլիսի 7-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Հայկ Եսայան
Տնօրեն

Վրեժ Պողոսյան
Ֆինանսական տնօրեն

	Ընկերության մասնակիցներին վերագրելի			
հազ. դրամ	Կանոնադ-րական կապիտալ	Լրացուցիչ կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը առ 1 հունվարի 2014թ.	15,050	6,519,894	(24,569)	6,510,375
Ընդամենը համապարփակ վնաս				
Վնաս և ընդամենը համապարփակ վնաս տարվա համար	-	-	(1,881,540)	(1,881,540)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014թ.	**15,050**	**6,519,894**	**(1,906,109)**	**4,628,835**
Մնացորդը առ 1 հունվարի 2015թ.	15,050	6,519,894	(1,906,109)	4,628,835
Ընդամենը համապարփակ վնաս				
Վնաս և ընդամենը համապարփակ վնաս տարվա համար	-	-	(2,424,865)	(2,424,865)
Գործառնություններ Ընկերության սեփականատերերի հետ				
Սկզբնական զեղչ մասնակցից ցածր տոկոսադրույքով ստացված վարկերի և փոխառությունների գծով՝ առանց 155,816 հազար դրամ հետաձգված հարկի (ծնթգ. 9)	-	623,263	-	623,263
Կանոնադրական կապիտալի փոփոխություն	1,909	-	(1,909)	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.	**16,959**	**7,143,157**	**(4,332,883)**	**2,827,233**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 49-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

հազ. դրամ	2015թ.	2014թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ՝ ներառյալ ԱԱՀ	25,380,740	13,131,838
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ՝ ներառյալ ԱԱՀ	(15,271,332)	(4,136,634)
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(2,949,132)	(1,060,882)
Վճարումներ շահութահարկի գծով	(266,829)	(605,466)
ԱԱՀ-ի փոխհատուցում	929,200	-
Վճարված հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	(2,391,521)	(1,462,600)
Վճարված տոկոսներ	(1,940,581)	(367,318)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**3,490,545**	**5,498,938**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Դուստր կազմակերպության ձեռքբերում՝ առանց ձեռքբերված դրամական միջոցների	(24,106,792)	-
Տրված փոխառություններ	(13,240)	(79,125)
Տրված փոխառությունների մարում	80,207	47,227
Ստացված տոկոսներ	11,726	377
Հիմնական միջոցների ձեռքբերում	(8,404,158)	(4,821,769)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(3,704,934)	(232,632)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(36,137,191)**	**(5,085,922)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Հոսքեր վարկերից և փոխառություններից	57,923,163	3,634,367
Վարկերի և փոխառությունների մարում	(24,234,856)	(3,915,658)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված/ ֆինանսավորման գործունեության համար (օգտագործված) զուտ դրամական միջոցներ	**33,688,307**	**(281,291)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	1,041,661	131,725
Դրամական միջոցները և դրանց համարժեքները հունվարի 1-ի դրությամբ	214,741	62,298
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	29,552	20,718
Դրամական միջոցները և դրանց համարժեքները դեկտեմբերի 31-ի դրությամբ (ծնթգ. 13)	**1,285,954**	**214,741**

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 49-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ: